

Հավելված
ՀՀ կառավարության 2015 թվականի
նոյեմբերի 12-ի N 1322 - Ն որոշման

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԲԱՇԽՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ
ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՊՈՐԻՆԻ ՍՊԱՌՄԱՆ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՍՊԱՌՎԱԾ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ
ԷՆԵՐԳԻԱՅԻ ՔԱՆԱԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

1. Սույն մեթոդիկայով հաշվարկվում է էլեկտրական էներգիայի բաշխման համակարգում տեղի ունեցած պատահարների ընթացքում սպառված էլեկտրական էներգիայի քանակը:

2. Սույն մեթոդիկայի իմաստով էլեկտրական էներգիայի բաշխման համակարգում տեղի ունեցած պատահար է համարվում սպառողի կողմից էլեկտրական էներգիայի բաշխման համակարգից էլեկտրական էներգիայի սպառումը՝ հաշվառքի սարքի շրջանցմամբ և (կամ) առանց պայմանագրի (ապօրինի սպառում): Ապօրինի և հաշվառքի սարքի շրջանցմամբ սպառած էլեկտրական էներգիայի քանակը հաշվարկվում է՝ համաձայն հետևյալ բանաձևերի՝

1) միաֆազ միացման դեպքում՝ $W = U \times I_{hp} \times \cos \varphi \times T / 1000$.

2) եռաֆազ միացման դեպքում՝ $W = \sqrt{3} \times U \times I_{hp} \times \cos \varphi \times T / 1000$,

որտեղ՝

$\cos \varphi$ - ն հզորության գործակիցն է,

W -ն հաշվարկվող էլեկտրական էներգիայի քանակն է (կՎ.տ.ժ),

U -ն տվյալ ցանցի լարումն է (Վ),

I_{hp} - ն երկարատև աշխատանքային ռեժիմում հոսանքի թույլատրելի առավելագույն մեծությունն է՝ կախված հաղորդալարի տեսակից, նյութից և կտրվածքի մակերեսից: I_{hp} - ն չի կարող գերազանցել միացման կետում ցանցը սնող հաղորդալարի թողունակությունը,

T - ն սպառման ժամանակահատվածն է (ժամ):

3. Այն դեպքում, եթե հնարավոր չէ որոշել և ամրագրել ապօրինի և հաշվառքի սարքի շրջանցմամբ սպառման ժամանակահատվածը, ապա որպես Էլեկտրական էներգիայի ապօրինի և հաշվառքի սարքի շրջանցմամբ սպառման տևողության հաշվարկային մեծություն ընդունվում է հավասար՝

- 1) 960 ժամ՝ օդային գծերից ապօրինի միացման դեպքերում.
- 2) 1440 ժամ՝ ստորգետնյա մալուխներից ապօրինի միացման դեպքերում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ